

«Գրանցված է»  
ՀՀ արդարադատության  
նախարարության կողմից  
18 հուլիսի 2014 թ.  
Պետական գրանցման թիվ 11814283

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

7 հուլիսի 2014 թ.  
ք. Երևան

N 417-Ն

## Հ Ր Ա Մ Ա Ն

ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎՃԱՐԻ ԱՄՍԱԿԱՆ ԱՄՓՈՓ (ՊԱՐԶԵՑՎԱԾ),  
ՏԱՐԵԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ (ՊԱՐԶԵՑՎԱԾ) ՀԱՇՎԱՐԿՆԵՐԻ ՁԵՎԵՐՈՐ ԵՎ ԴՐԱՆՑ  
ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԵՐՈՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌՆԼԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ  
ՀՈՒՆԻՍԻ 7-Ի N 175-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի  
70-րդ հոդվածի 1-ին մասով և «Եկամտային հարկի մասին» 2010 թվականի դեկտեմբերի 22-ի  
ՀՕ-246-Ն Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածով`

### *Հրամայում եմ*

1. Հաստատել`

- 1) եկամտային հարկի և սոցիալական վճարի ամսական ամփոփ հաշվարկի ձևը և լրացման կարգը` համաձայն հավելված 1-ի,
- 2) եկամտային հարկի և սոցիալական վճարի ամսական պարզեցված հաշվարկի ձևը և լրացման կարգը` համաձայն հավելված 2-ի,
- 3) տարեկան եկամուտների մասին հաշվարկի ձևը և լրացման կարգը` համաձայն հավելված 3-ի,
- 4) տարեկան եկամուտների մասին պարզեցված հաշվարկի ձևը և լրացման կարգը` համաձայն հավելված 4-ի:

2. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի հունիսի 7-ի «Եկամտային հարկի և կուտակային վճարի հաշվարկման և վճարման կարգի մասին» հրահանգը հաստատելու մասին» N 175-Ն հրամանով հաստատված հրահանգի 1-ին, 2-րդ, 7-րդ և 8-րդ հավելվածները հանել:

**ՀՀ ֆինանսների նախարար**

**Գ. Խաչատրյան**

Հավելված 1  
Հաստատված է  
ՀՀ ֆինանսների նախարարի  
2014 թվականի հուլիսի 7-ի  
N 417-Ն հրամանի

<b>ԱՄՓՈՓ ՀԱՇՎԱՐԿ</b> Եկամտային հարկի և սոցիալական վճարի ամսական _____ (տարի) _____ (ամիս)	Փաստաթղթի մուտքագրման համար  _____ (լրացվում է հարկային մարմնի կողմից)
Հարկ վճարողի անվանումը	Հարկ վճարողի հաշվառման համար (ՀՎՀՀ)  _____
Հաշվարկի ներկայացման ամսաթիվ՝	Չափի միավոր՝ Դրամ

1. «Փաստաթղթի համարը» մասում նշվում է հարկային մարմնում հարկային գործակալի (կազմակերպություն, անհատ ձեռնարկատեր, նոտար) անձնական գործում տվյալ փաստաթղթի հերթական համարը, «Հարկ վճարողի անվանումը» տողում ինքնաշխատ լրացվում է կազմակերպության անվանումը և կազմակերպաիրավական ձևը (անհատ ձեռնարկատիրոջ կամ նոտարի անունը, ազգանունը), իսկ «Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)» տողում՝ հարկ վճարողի հաշվառման համարը

### Բաժին I. Գործատուի եկամտային հարկի և սոցիալական վճարի հաշվարկ՝ ըստ աշխատողների

Աշխատողի (այդ թվում վարձու աշխատողի) նույնականացման տվյալներ			Հաշվետու ժամանակաշրջանում ստացման ենթակա (ստացված) եկամտի գումար						Վճարված ժամանակավոր անաշխատունակության նպաստներ				
Ազգանուն	Անուն	Հանրային ծառայությունների համարանիշ (ՀՕՀ)	Զբաղմունքների դասակարգչի կոդ	Գուտակային կենսաթոշակային համակարգի մասնակցության կարգավիճակ	Աշխատավարձ	Քաղաքացիական պայմանագրով աշխատանքի վարձատրություն	Այլ հարկվող եկամուտ (բացի նպաստների)	Հարկվող եկամտի նվազեցման գումար	Գործատուի միջոցներով վճարված նպաստների գումար	ՀՀ պետական բյուջեի միջոցներով վճարված նպաստների գումար	Ավելի վճարված նպաստի հետպահում	Եկամտային հարկ	Սոցիալական վճար
1.1	1.2	1.3	1.4	1.5	1.6	1.7	1.8	1.9	1.10	1.11	1.12	1.13	1.14
								( )					
								( )					
								( )					
								( )					
<b>Բաժին 1.1 Դատարանի վճռի հիման վրա կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ հիմքերով վճարված եկամուտ</b>													
								( )					
								( )					
<b>Սահմանափակ օգտագործման ենթակա տեղեկատվության ներքո գտնվող անձինք 1.15</b>								( )					<b>X</b>
Ընդամենը								( )					

2. 1-ին բաժնում տրվում է հաշվետու ամսվա համար հարկային գործակալի (գործատուի) եկամտային հարկի և սոցիալական վճարների հաշվարկը՝ ըստ բոլոր (վարձու) աշխատողների, յուրաքանչյուր (վարձու) աշխատողի համար լրացվում է մեկ տող (անկախ հաշվետու ամսում եկամուտներ ստանալու հանգամանքից)



Ընդամենը								

7. «Նպաստների դասակարգման կողք» սյունակում նշվում է ժամանակավոր անաշխատունակության նպաստների տեսակը կամ հետպահման դեպքը (կողք). 1 – հիվանդության նպաստ, 2 – պրոթեզավորման նպաստ, 3 – առողջարանային բուժման նպաստ, 4 – հղիության և ծննդաբերության նպաստ, 5 – ընտանիքի հիվանդ անդամի խնամքի նպաստ, 6 – ավելի վճարված նպաստի գումարի հետպահումը

8. «Ժամանակավոր անաշխատունակության (հետպահման) / սկիզբը (օրը)» և «Ժամանակավոր անաշխատունակության (հետպահման) / ավարտը (օրը)» սյունակներում նշվում են ժամանակավոր անաշխատունակության կամ հետպահման ժամանակահատվածը, ընդ որում՝ եթե գործատուն, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ժամանակավոր անաշխատունակության նպաստը վճարել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 14-ի N 1024-Ն որոշման 5-րդ հավելվածի 9-րդ կետով սահմանված ժամանակավոր անաշխատունակության թերթիկի հիման վրա (բացակայում է ժամանակավոր անաշխատունակության ժամանակահատվածի վերջը), ապա որպես ժամանակավոր անաշխատունակության ժամանակահատվածի վերջ լրացվում է յուրաքանչյուր անգամ ժամանակավոր անաշխատունակության թերթիկի գործատուին ներկայացնելու օրը՝ առանց փոփոխելու ժամանակավոր անաշխատունակության սկիզբը

9. «Նպաստի գումարը կամ հետպահվող գումարը» սյունակում նշվում է հաշվետու ամսում ժամանակավոր անաշխատունակության նպաստների վճարված գումարները կամ հաշվետու ամսում հղիության և ծննդաբերության արձակուրդն ընդհատվելու դեպքում վճարված նպաստի վերահաշվարկման արդյունքում ավելի վճարված նպաստի հետպահվող գումարները

10. [1.13] սյունակում լրացվում է հաշվետու ամսում (վարձու) աշխատողի [1.6], [1.7], [1.8], [1.9], [1.10] և [1.11] սյունակներում նշված եկամուտներից օրենսդրությամբ սահմանված կարգով և դրույքաչափերով հաշվարկված եկամտային հարկի գումարը: Օրենսդրությամբ սահմանված դեպքերում 1996 թվականի հունվարի 1-ին և դրանից հետո ծնված (վարձու) աշխատողի կողմից վճարվող սոցիալական վճարի գումարը մինչև 2017 թվականի հուլիսի 1-ը նվազեցվում է նրա կողմից վճարման ենթակա եկամտային հարկի գումարից

**(10-րդ կետը խմբ. 05.06.15 N 358-Ն)**

11. [1.14] սյունակում ինքնաշխատ լրացվում է հաշվետու ամսում (վարձու) աշխատողի [1.6] և [1.7] սյունակներում նշված եկամուտների հանրագումարից օրենսդրությամբ սահմանված չափերով հաշվարկված սոցիալական վճարի գումարը

12. Բաժին 1.1-ում ըստ տողերի հարկային գործակալի կողմից անձնավորված լրացվում են դատարանի վճռի հիման վրա կամ ՀՀ օրենքով սահմանված այլ հիմքերով վճարված աշխատավարձը, պայմանագրային եկամուտը, ժամանակավոր անաշխատունակության նպաստը և այլ եկամուտը: [1.15] տողում լրացվում են օրենսդրությամբ սահմանված սահմանափակ օգտագործման ենթակա տեղեկատվության ներքո գտնվող անձանց վերաբերյալ ամփոփ (ոչ անձնավորված) տվյալները

Նշված բաժնում յուրաքանչյուր տողը (բացառությամբ [1.15] տողի) լրացված լինելու դեպքում լրացվում (բացվում) է հետևյալ աղյուսակը՝

Ֆիզիկական և անձի	Հանրային ծառայություններ	Վճարված եկամտի	Հարկադիր պարապուրդի	Աշխատանքային և կամ	Ժամանակավոր
------------------	--------------------------	----------------	---------------------	--------------------	-------------

ազգանուն, անուն	ի համարանիշ (ՀԾՀ)	դասակարգման կոդ	քաղաքացիաիրավական հարաբերություն				անաշխատուն ա-կույթյան		
			սկիզբ (օրը, ամիսը, տարին )	ավարտ (օրը, ամիսը, տարին )	սկիզբ (օրը, ամիսը, տարին )	ավարտ (օրը, ամիսը, տարին )	սկիզբ (օրը, ամիսը, տարին )	ավարտ (օրը, ամիսը, տարին )	

13. «Վճարված եկամտի դասակարգման կոդը» սյունակում նշվում է եկամտի վճարման հիմքը (կոդը). 1 – դատարանի վճռի հիման վրա աշխատանքի վերականգնման դեպքում հարկադիր պարապուրդի վճարում, 2 – դատարանի վճռի հիման վրա նպաստի վճարում, 3 – դատարանի վճռի հիման վրա այլ եկամտի վճարում, 4 – նախորդ հաշվետու ժամանակահատվածներում ավարտված քաղաքացիաիրավական պայմանագրերով ծառայությունների մատուցման (աշխատանքի կատարման) դիմաց եկամտի վճարում, 5 – նախորդ հաշվետու ժամանակահատվածներում աշխատանքից ազատված աշխատողին աշխատավարձ և դրան հավասարեցված եկամտի վճարում, 6 – նախորդ հաշվետու ժամանակահատվածներում աշխատանքից ազատված աշխատողին այլ հարկվող եկամտի վճարում

**Բաժին II. Հարկվող այլ եկամուտներից եկամտային հարկի հաշվարկ**

Եկամտի և քաղաքացիության կոդ	Եկամտի ընդհանուր գումար	Դրույքաչափ (%)	Եկամուտները ստացողների թվաքանակ	Եկամտային հարկի գումար
2.1	2.2	2.3	2.4	2.5
Ընդամենը				

14. 2-րդ բաժնում տրվում է հաշվետու ամսում տվյալ հարկային գործակալի կողմից բոլոր ֆիզիկական անձանց վճարված հարկվող այլ եկամուտներից եկամտային հարկի հաշվարկը, յուրաքանչյուր եկամտի տեսակի և քաղաքացիության համար լրացվում է մեկ տող

15. [2.1] սյունակում նշվում է հաշվետու ամսվա համար [2.2] սյունակում նշված եկամտի և եկամուտ ստացողների քաղաքացիության կոդը (ՀՀ քաղաքացի կամ օտարերկրացի՝ օտարերկրյա քաղաքացի, քաղաքացիություն չունեցող անձ), [2.2] սյունակում լրացվում է հաշվետու ամսվա համար հաշվեգրված այլ եկամտատեսակների գումարները (որոնք հարկվում են առանձին դրույքաչափերով), [2.3] սյունակում նշվում է ընտրված եկամտին և քաղաքացիության կոդին համապատասխանող եկամտային հարկի դրույքաչափը, [2.4] սյունակում նշվում է [2.2] սյունակում նշված եկամուտներ ստացողների թվաքանակը (հաշվարկում չի մասնակցում) և [2.5] սյունակում լրացվում է եկամտային հարկի գումարը

Եկամտի	Եկամտի	Դրույքաչափ	Եկամտի	Դրույքաչափ
--------	--------	------------	--------	------------

տեսակ	կոդ		կոդ	
	ՀՀ քաղաքացի		Օտարերկրացի	
1. Ռոյալթի	001	10%	101	10%
2. Տոկոս	002	10%	102	10%
3. Շահում	003	սանդղակ	103	սանդղակ
4. Մրցանակ	004	սանդղակ	104	սանդղակ
5. Նվիրատվություն, օգնություն	005	սանդղակ	105	սանդղակ
6. Ապահովագրական հատուցում	006	սանդղակ	106	5%
7. Գույքն օտարելու դիմաց եկամուտ	007	10%	107	x
8. Գույքի արժեքի հավելված	008	x	108	10%
9. Վարձավճար	009	10%	109	10%
10. Փոխադրման (ֆրախտի) դիմաց եկամուտ	010	սանդղակ	110	5%
11. Ֆիզ. անձի համար ապահովագրավճար	011	սանդղակ	111	սանդղակ
12. Կամավոր կենսաթոշակներ	012	10%	112	10%
13. Չհիմնավորված վճարումներ	013	11%	013	11%
14. Նվազեցման կատարման տարվան հաջորդող 12-ամսյա ժամանակահատվածում չվճարված պասիվ եկամուտներ	014	20%	114	20%
15. ՀՀ-ում կացության կարգավիճակ չունեցող օտարերկրյա քաղաքացու կամ քաղաքացիություն չունեցող անձի աշխատանքի վարձատրություն	x	x	115	սանդղակ
16. Այլ եկամուտներ	099	սանդղակ	199	սանդղակ

### Բաժին III. Ամփոփ տվյալներ

Եկամտային հարկի գումար (հաշվարկված)	Եկամտային հարկից նվազեցվող նպաստների գումար (վճարված)	Ավելի վճարված նպաստների գումարների հետպահում	Եկամտային հարկ (վճարման ենթակա)	Սոցիալական վճարներ (վճարման ենթակա)
3.1	3.2	3.3	3.4	3.5
	( )			

16. 3-րդ բաժնում տրվում են հաշվետու ամսվա համար բոլոր (վարձու) աշխատողների եկամտային հարկի և սոցիալական վճարների հաշվարկի ամփոփ տվյալները

17. [3.1] սյունակում ինքնաշխատ ([3.1]=[1.13]+[2.5]) լրացվում է հաշվետու ամսում հաշվարկված եկամտային հարկի ընդհանուր գումարը, [3.2] սյունակում ինքնաշխատ լրացվում է հաշվետու ամսում ՀՀ պետական բյուջեի միջոցներով վճարված և եկամտային հարկից նվազեցվող ժամանակավոր անաշխատունակության նպաստների ընդհանուր գումարը (եթե [3.1]>[1.11], ապա [3.2]=[1.11], հակառակ դեպքում [3.2]=[3.1]), [3.3] սյունակում ինքնաշխատ ([3.3]=[1.12]) լրացվում է հաշվետու ամսում ավելի վճարված հղիության և ծննդաբերության արձակուրդն ընդհատվելու դեպքում վճարված նպաստների վերահաշվարկման արդյունքում ավելի վճարված նպաստների հետպահվող ընդհանուր

գումարը, [3.4] սյունակում ինքնաշխատ ( $[3.4]=[3.1]+[3.2]+[3.3]>=0$ ) լրացվում է հաշվետու ամսվա համար վճարման ենթակա եկամտային հարկի ընդհանուր գումարը և [3.5] սյունակում ինքնաշխատ ( $[3.5]=[1.14]$ ) լրացվում է հաշվետու ամսվա համար վճարման ենթակա սոցիալական վճարի վճարման ենթակա գումարը

**Հարկային գործակալի (գործատուի) պատասխանատու անձի (անձանց) ստորագրություն (ներ)**

(*հավելվածը խմբ. 05.06.15 N 358-Ն*)

Հավելված 2  
Հաստատված է  
ՀՀ ֆինանսների նախարարի  
2014 թվականի հուլիսի 7-ի  
N 417-Ն հրամանի

<b>ՊԱՐԶԵՑՎԱԾ ՀԱՇՎԱՐԿ</b> Եկամտային հարկի և սոցիալական վճարի ամսական _____ (տարի) _____ (ամիս)	Փաստաթղթի մուտքագրման համար _____ <i>(լրացվում է հարկային մարմնի կողմից)</i>
<b>Աշխատողի նույնականացման տվյալներ</b>	
Ազգանուն	Անուն
Հարկ վճարողի հաշվառման համար (ՀՎՀՀ)	
Հանրային ծառայությունների համարանիշ (ՀԾՀ)	
Անձը հաստատող փաստաթղթի տեսակ	Սերիա և համար
Հաշվարկի ներկայացման ամսաթիվ՝	Չափի միավոր՝ Դրամ

1. «Փաստաթղթի համար» մասում նշվում է հարկային մարմնում աշխատողի անձնական գործում տվյալ փաստաթղթի հերթական համարը, իսկ հետագա տողերում ինքնաշխատ լրացվում են ֆիզիկական անձի նույնականացման տվյալները. «Ազգանուն» և «Անուն» տողերում՝ աշխատողի ազգանունը և անունը, «Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)» տողում՝ հարկ վճարողի հաշվառման համարը, «Հանրային ծառայությունների համարանիշը (ՀԾՀ)» տողում՝ աշխատողի հանրային ծառայությունների համարանիշը կամ հանրային ծառայությունների համարանիշ չունենալու մասին տեղեկանքի համարը (սոցիալական ապահովության քարտի համարը կամ սոցիալական ապահովության քարտ չունենալու մասին տեղեկանքի համարը), «Անձը հաստատող փաստաթղթի տեսակ» և «Սերիա և համար» տողերում՝ համապատասխանաբար ինքնաշխատ լրացվում են ՀՀ-ում անձը հաստատող փաստաթղթի տեսակներից որևէ մեկը՝ ՀՀ քաղաքացիների համար ՀՀ անձնագիր, նույնականացման քարտ, մինչև 16 տարեկանների դեպքում՝ ծննդյան վկայական, օտարերկրյա քաղաքացու և քաղաքացիություն չունեցող անձի՝ ՀՀ-ում բնակվելու իրավունքը հաստատող փաստաթուղթ (կացության քարտ, ՌԴ քաղաքացու դեպքում՝ ՌԴ քաղաքացու անձնագիր), փախստականի կարգավիճակ ունեցող անձի՝ կոնվենցիոն ճամփորդական փաստաթուղթ և անձը հաստատող համապատասխան փաստաթղթի սերիան և համարը

**Բաժին I. Աշխատողի (այդ թվում՝ վարձու աշխատողի) եկամտային հարկի և սոցիալական վճարի հաշվարկ՝ ըստ գործատուների**

<b>Գործատուի նույնականացման տվյալներ</b>	<b>Հաշվետու ժամանակաշրջանում ստացման ենթակա (ստացված) եկամտի գումար</b>													
Անվա	ՀՎՀ	Զբաղ-	Կուտա-	Աշխա-	Աշխա-	Աշխա-	Քաղա-	Քաղաքա	Քաղաքա-	Գործատուի	Այլ	Հարկվող	Եկա-	Սոցիա

-նում	Հ	մուտքներ ի դասա- կարգիչ	կային կենսաթո- շակային համա- կարգի մասնակ- ցության կարգա- վիճակ	տավար ձ	տանքային հարա- բերություն -ների սկիզբ	տանքային հարաբե- րություն- ների ավարտ	քացիաի- րավակա ն պայմա- նագրով աշխա- տանքի վարձատ- րություն	- ցիաիրա- վական հարաբե- րության սկիզբ	ցիաիրա- վական հարա- բերությա ն ավարտ	միջոցներից ստացված ժամանա- կավոր անաշխատու- նակության նպաստներ	հարկվո ղ եկամու տ	եկամտի նվազեցմա ն գումար	մտայի ն հարկ	-լական վճար
1.1	1.2	1.3	1.4	1.5	1.5.1	1.5.2	1.6	1.6.1	1.6.2	1.7	1.8	1.9	1.10	1.11
												( )		
Ընդամենը														

2. 1-ին բաժնում տրվում է հաշվետու ամսվա համար (վարձու) աշխատողի եկամտային հարկի և սոցիալական վճարի հաշվարկը՝ ըստ բոլոր գործատուների (կազմակերպություն, անհատ ձեռնարկատեր, նոտար), յուրաքանչյուր գործատուի համար լրացվում է մեկ տող

3. [1.1] և [1.2] սյունակներում լրացվում են գործատուների նույնականացման տվյալները. [1.1] սյունակում՝ լրացվում է կազմակերպության անվանումը և կազմակերպաիրավական ձևը (անհատ ձեռնարկատիրոջ կամ նոտարի անունը, ազգանունը), իսկ [1.2] տողում՝ հարկ վճարողի հաշվառման համարը

4. [1.3] սյունակում ինքնաշխատ լրացվում է տվյալ գործատուի (վարձու) աշխատողի զբաղմունքի (պաշտոնի, մասնագիտության) կոդը, [1.4] սյունակում ինքնաշխատ լրացվում է կուտակային կենսաթոշակային համակարգում (վարձու) աշխատողի մասնակցության կոդը (1՝ սոցիալական վճար կատարող չէ, 2՝ սոցիալական վճար կատարող է, 3՝ դիմումի հիման վրա սոցիալական վճար կատարող է)

5. [1.5] սյունակում նշվում է հաշվետու ամսվա համար տվյալ գործատուի վարձու աշխատողին հաշվեգրված աշխատավարձը և դրան հավասարեցված վճարումները, [1.6] սյունակում նշվում է հաշվետու ամսվա համար քաղաքացիաիրավական պայմանագրերով ծառայությունների մատուցման (աշխատանքի կատարման) դիմաց աշխատողին փաստացի վճարված եկամուտները (պայմանագրային եկամուտը), [1.5.1] և [1.6.1] սյունակներում նշվում են, համապատասխանաբար, հաշվետու ամսում տվյալ գործատուի հետ աշխատանքային և (կամ) քաղաքացիաիրավական հարաբերության սկիզբը, իսկ [1.5.2] և [1.6.2] սյունակներում՝ ավարտը (օրը, ամիսը, տարին), [1.7] սյունակում նշվում է վարձու աշխատողի ստացած ժամանակավոր անաշխատունակության նպաստների գումարները (որոնք վճարվում են գործատուի միջոցների հաշվին և բյուջեից փոխհատուցման ենթակա չեն)

6. [1.8] սյունակում նշվում է (վարձու) աշխատողին վճարված՝ [1.5], [1.6] և [1.7] սյունակներում չընդգրկված և «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված դրույքաչափերով հարկվող այլ եկամուտները (այդ թվում՝ աշխատողին ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափը գերազանցող առողջության ապահովագրության համար կատարված ապահովագրավճարները, ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափերից ավելի վճարված փոխհատուցման վճարները, աշխատողին վճարված օգնության գումարները), [1.9] սյունակում նշվում է հարկվող եկամտի օրենքով սահմանված չափերը չգերազանցող կամավոր կենսաթոշակային վճարների գումարները՝ ոչ ավելի, քան  $([1.5]+[1.6]+[1.7]+ [1.8]) - ([1.5]+[1.6]+[1.7]+[1.8]):1,05$

7. [1.10] սյունակում ինքնաշխատ լրացվում է հաշվետու ամսում (վարձու) աշխատողի [1.5], [1.6], [1.7], [1.8] և [1.9] սյունակներում նշված եկամուտների հանրագումարից օրենսդրությամբ սահմանված ամսական սանդղակի (այսուհետ՝ սանդղակ) դրույքաչափերով հաշվարկված եկամտային հարկի գումարը: Օրենսդրությամբ սահմանված դեպքերում 1996 թվականի հունվարի 1-ին և դրանից հետո ծնված (վարձու) աշխատողի կողմից վճարվող

սոցիալական վճարի գումարը մինչև 2017 թվականի հունիսի 1-ը նվազեցվում է նրա կողմից վճարման ենթակա եկամտային հարկի գումարից

8. [1.11] սյունակում ինքնաշխատ լրացվում է հաշվետու ամսում (վարձու) աշխատողի [1.5] և [1.6] սյունակներում նշված եկամուտների հանրագումարից օրենսդրությամբ սահմանված չափով հաշվարկված սոցիալական վճարի գումարը

**Բաժին II. Հարկվող այլ եկամուտներից եկամտային հարկի հաշվարկ**

Եկամտի և քաղաքացիության կող	Եկամտի ընդհանուր գումար	Դրույքաչափ (%)	Եկամուտները վճարողների թվաքանակ	Եկամտային հարկի գումար
2.1	2.2	2.3	2.4	2.5
<b>Ընդամենը</b>				

9. 2-րդ բաժնում տրվում է հաշվետու ամսում բոլոր տնտեսավարող սուբյեկտներից տվյալ ֆիզիկական անձի ստացած հարկվող այլ եկամուտներից եկամտային հարկի հաշվարկը, յուրաքանչյուր եկամտի տեսակի և քաղաքացիության համար լրացվում է մեկ տող

10. [2.1] սյունակում նշվում է հաշվետու ամսվա համար [2.2] սյունակում նշված եկամտի և եկամուտը ստացողի քաղաքացիության կողը (ՀՀ քաղաքացի կամ օտարերկրացի՝ օտարերկրյա քաղաքացի, քաղաքացիություն չունեցող անձ), [2.2] սյունակում լրացվում է հաշվետու ամսվա համար հաշվեգրված այլ եկամտատեսակների գումարները (որոնք հարկվում են առանձին դրույքաչափերով), [2.3] սյունակում նշվում է ընտրված եկամտին և քաղաքացիության կողին համապատասխանող եկամտային հարկի դրույքաչափը, [2.4] սյունակում նշվում է [2.2] սյունակում նշված եկամուտներ վճարողների թվաքանակը (հաշվարկում չի մասնակցում) և [2.5] սյունակում լրացվում է եկամտային հարկի գումարը

Եկամտի տեսակ	Եկամտի կող	Դրույքաչափ	Եկամտի կող	Դրույքաչափ
	ՀՀ քաղաքացի		Օտարերկրացի	
1. Ռոյալթի	001	10%	101	10%
2. Տոկոս	002	10%	102	10%
3. Շահում	003	սանդղակ	103	սանդղակ
4. Մրցանակ	004	սանդղակ	104	սանդղակ
5. Նվիրատվություն, օգնություն	005	սանդղակ	105	սանդղակ
6. Ապահովագրական հատուցում	006	սանդղակ	106	5%
7. Գույքն օտարելու դիմաց եկամուտ	007	10%	107	x
8. Գույքի արժեքի հավելված	008	x	108	10%
9. Վարձավճար	009	10%	109	10%
10. Փոխադրման (ֆրախտի) դիմաց եկամուտ	010	սանդղակ	110	5%
11. Ֆիզ. անձի համար ապահովագրավճար	011	սանդղակ	111	սանդղակ

12. Կամավոր կենսաթոշակներ	012	10%	112	10%
13. Այլ եկամուտներ	099	սանդղակ	199	սանդղակ

**Բաժին III. Ամփոփ տվյալներ**

Եկամտային հարկ (վճարման ենթակա)	Սոցիալական վճար` ընդամենը
3.1	3.2

11. 3-րդ բաժնում տրվում են հաշվետու ամսում բոլոր գործատուներից տվյալ ֆիզիկական անձի ստացած (ստացման ենթակա) հարկվող եկամուտներից եկամտային հարկի և սոցիալական վճարի հաշվարկի ամփոփ տվյալները

12. [3.1] սյունակում ինքնաշխատ ([3.1]=[1.10]+[2.5]) լրացվում է հաշվետու ամսվա համար վճարման ենթակա եկամտային հարկի ընդհանուր գումարը, [3.2] սյունակում ինքնաշխատ ([3.2]=[1.11]) լրացվում է հաշվետու ամսվա համար վճարման ենթակա սոցիալական վճարի գումարը

**Հարկ վճարողի ստորագրություն**

**Հավելված 3**  
*Հաստատված է*  
*ՀՀ ֆինանսների նախարարի*  
*2014 թվականի հուլիսի 7-ի*  
*N 417-Ն հրամանի*

<b>ՀԱՇՎԱՐԿ</b> <b>Տարեկան եկամուտների մասին</b> _____ (տարի)	<b>Փաստաթղթի մուտքագրման համար</b> _____ <i>(լրացվում է հարկային մարմնի կողմից)</i>
<b>Ֆիզիկական անձի նույնականացման տվյալներ</b>	
Ազգանուն	Անուն
Հանրային ծառայությունների համարանիշ (ՀԾՀ)	_____
Կուտակային կենսաթոշակային համակարգի մասնակցության կարգավիճակ	<b>Հարկ վճարողի հաշվառման համար</b> _____ (ՀՎՀՀ)
Հաշվարկի ներկայացման ամսաթիվ`	Չափի միավոր` Դրամ

1. «Փաստաթղթի համարը» մասում նշվում է հարկային մարմնում ֆիզիկական անձի (անհատ ձեռնարկատեր, նոտար, ինքնագրադաված անձ) անձնական գործում տվյալ փաստաթղթի հերթական համարը, իսկ հետագա տողերում նշվում են ֆիզիկական անձի նույնականացման տվյալները

2. «Հանրային ծառայությունների համարանիշը (ՀԾՀ)» տողում նշվում է ֆիզիկական անձի հանրային ծառայությունների համարանիշը կամ հանրային ծառայությունների համարանիշ չունենալու մասին տեղեկանքի համարը (սոցիալական ապահովության քարտի համարը կամ սոցիալական ապահովության քարտ չունենալու մասին տեղեկանքի համարը),

որի հիման վրա «Ազգանունը» և «Անունը» տողերում ինքնաշխատ լրացվում է աշխատողի ազգանունը և անունը

3. «Կենսաթոշակային համակարգի մասնակիցը» տողում նշվում է կուտակային կենսաթոշակային համակարգում ֆիզիկական անձի մասնակցության կողը (1՝ սոցիալական վճար կատարող չէ, 2՝ սոցիալական վճար կատարող է, 3՝ դիմումի հիման վրա սոցիալական վճար կատարող է)

4. «Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)» տողում նշվում է հարկ վճարողի հաշվառման համարը (առկայության դեպքում)

**Բաժին I. Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) քաղաքացիաիրավական պայմանագրերից, աշխատանքային պայմանագրերից եկամուտներ և ծախսեր**

1. Քաղաքացիաիրավական պայմանագրերով վարձատրություն	[1.1]	
2. Քաղաքացիաիրավական պայմանագրերի գծով ծախսեր՝	[1.2]	( )
1) նյութական ծախսեր	[1.2 <sup>1</sup> ]	( )
2) վարձավճարներ	[1.2 <sup>2</sup> ]	( )
3) չփոխհատուցվող (չհաշվանցվող) հարկեր, տուրքեր և պարտադիր այլ վճարներ	[1.2 <sup>3</sup> ]	( )
4) բանկային ծառայությունների համար վճարներ	[1.2 <sup>4</sup> ]	( )
5) դատական ծախսեր	[1.2 <sup>5</sup> ]	( )
6) գործուղման ծախսեր	[1.2 <sup>6</sup> ]	( )
7) պատճառած վնասի հատուցում	[1.2 <sup>7</sup> ]	( )
8) տույժեր, տուգանքներ և գույքային այլ սանկցիաներ	[1.2 <sup>8</sup> ]	( )
9) աուդիտորական, իրավաբանական, խորհրդատվական, տեղեկատվական ծախսեր	[1.2 <sup>9</sup> ]	( )
10) այլ ծախսեր	[1.2 <sup>10</sup> ]	( )
3. Քաղաքացիաիրավական պայմանագրերի գծով արդյունք	[1.3]	
4. Աշխատավարձ	[1.4]	
5. Այլ հարկվող եկամուտ	[1.5]	
6. Քաղաքացիաիրավական և աշխատանքային պայմանագրերի գծով արդյունք	[1.6]	

5. 1-ին բաժնում նշվում են ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) քաղաքացիաիրավական պայմանագրերից ստացած եկամուտները և ծախսերը, աշխատանքային պայմանագրերից ստացման ենթակա աշխատավարձը և այդ պայմանագրերի շրջանակներում ստացած այլ եկամուտները (արդյունքը), ընդ որում՝ ռեզիդենտը հաշվի է առնում ՀՀ տարածքում և դրա սահմաններից դուրս ստացման ենթակա (ստացված) եկամուտները, ոչ ռեզիդենտը հաշվի է առնում հայաստանյան աղբյուրներից ստացման ենթակա (ստացված) եկամուտները, իսկ նվազեցվող եկամուտները հաշվի չեն առնվում

6. [1.1] և [1.2] տողերում նշվում են ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) քաղաքացիաիրավական պայմանագրերից ստացած եկամուտները (վարձատրությունը) և դրանց գծով կատարված ծախսերը (տող[1.2]= տող[1.2<sup>1</sup>]+ տող[1.2<sup>2</sup>]+...+տող[1.2<sup>n</sup>], ընդ որում՝ [1.2<sup>8</sup>] տողում չեն նշվում ՀՀ պետական կամ համայնքների բյուջեներ, ինչպես նաև եկամտային հարկի և սոցիալական վճարների գծով գանձվող տույժերը, տուգանքները և գույքային այլ սանկցիաները), իսկ [1.3] տողում լրացվում է ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) քաղաքացիաիրավական պայմանագրերի գծով արդյունքը (տող[1.3]= տող[1.1]+տող[1.2]), ընդ որում՝ եթե արդյունքը բացասական է, ապա գումարը նշվում է փակագծերի մեջ և սույն հաշվարկի հետագա հաշվարկներում հաշվի չի առնվում

7. [1.4] տողում նշվում են ՀՀ ռեզիդենտների կողմից ՀՀ տարածքից դուրս աշխատանքային պայմանագրերից ստացման ենթակա աշխատավարձը և դրան հավասարեցված վճարումը

8. [1.5] տողում նշվում են ՀՀ ռեզիդենտների կողմից ՀՀ տարածքից դուրս գործատուներից ստացված այլ եկամուտները (այդ թվում՝ ստացված նյութական օգնության գումարները), որոնք հարկվում են տարեկան սանդղակով

9. [1.6] տողում լրացվում է ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) քաղաքացիաիրավական պայմանագրերի, աշխատավարձի գծով դրական արդյունքը (տող[1.6]=(տող[1.3]+տող[1.4])+տող[1.5])

**Բաժին II. Քաղաքացիաիրավական այլ պայմանագրերից եկամուտներ և եկամտային հարկ (բաժինը խմբ. 05.06.15 N 358-Ն)**

Եկամուտների տեսակ		Եկամուտ [2.1]	Դրույքաչափ [2.2]	Հարկ [2.3]
1. Ռոյալթի	[2.4]		10%	
2. Տոկոս	[2.5]		10%	
3. Վարձավճար	[2.6]		10%	
3.1. Անշարժ գույքի վարձավճարի 58,35 մլն դրամը գերազանցող գումար	[2.6.1]		10%	
4. Գույքի օտարման դիմաց եկամուտ	[2.7]		10%	
<b>Ընդամենը [2.8]</b>				

10. 2-րդ բաժնում նշվում են հարկային գործակալ չհանդիսացողներից (բացառությամբ [3.1]-րդ տողի) քաղաքացիաիրավական այլ պայմանագրերից ստացած եկամուտները (ռոյալթի, տոկոս, վարձավճար, գույքի օտարման դիմաց եկամուտ), որոնք հարկվում են առանձին դրույքաչափերով, ընդ որում՝ ռեզիդենտը հաշվի է առնում ՀՀ տարածքում և դրա սահմաններից դուրս ստացված եկամուտները, ոչ ռեզիդենտը հաշվի է առնում հայաստանյան աղբյուրներից ստացված եկամուտները

11. [2.1] սյունակում նշվում են հարկային գործակալ չհանդիսացողներից անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց ստացած՝ ռոյալթիները (տող [2.4]), տոկոսները (տող [2.5]), վարձակալության դիմաց հատուցումը (հարկային գործակալ չհանդիսացող անձանցից ստացված վարձավճարները՝ տող [2.6], հարկային տարվա ընթացքում բոլոր աղբյուրներից, այդ թվում հարկային գործակալներից, անշարժ գույքի վարձակալությունից ստացված վարձակալական վճարների հանրագումարի 58,35 մլն դրամը գերազանցող գումարները՝ տող [2.6.1]), ինչպես նաև անհատ ձեռնարկատեր չհանդիսացող կառուցապատողի կողմից անշարժ գույքի՝ օրենքով սահմանված չափը գերազանցող

տարածքների օտարումից եկամուտը (տող [2.7]), այնուհետև՝ [2.2] սյունակում նշված են եկամուտների այդ տեսակների համար եկամտային հարկի դրույքաչափերը և [2.3] սյունակում լրացվում են [2.4], [2.5], [2.6], [2.6.1] և [2.7] տողերում նշված եկամտից հաշվարկված եկամտային հարկի գումարները (սյունակ[2.3]=սյունակ[2.1]xսյունակ[2.2])

12. [2.8] տողում (սյունակ[2.3]) լրացվում է [2.4], [2.5], [2.6], [2.6.1] և [2.7] տողերում նշված եկամուտներից հաշվարկված եկամտային հարկի ընդհանուր գումարը (տող[2.8]=սյունակ[2.3]-ի տողերի հանրագումարը)

(բաժինը խմբ. 05.06.15 N 358-Ն)

### Բաժին III. Ձեռնարկատիրական գործունեությունից եկամուտներ և ծախսեր

1. Ձեռնարկատիրական (նոտարական) գործունեությունից եկամուտներ	[3.1]	
2. Ձեռնարկատիրական (նոտարական) գործունեության գծով ծախսեր՝	[3.2]	( )
1) նյութական ծախսեր	[3.2 <sup>1</sup> ]	( )
2) ամորտիզացիոն մասհանումներ	[3.2 <sup>2</sup> ]	( )
3) վարձավճարներ	[3.2 <sup>3</sup> ]	( )
4) ապահովագրական վճարներ (այդ թվում՝ բժշկական ապահովագրության գծով)[3.2 <sup>4</sup> ]	[3.2 <sup>4</sup> ]	( )
5) չփոխհատուցվող (չհաշվանցվող) հարկեր, տուրքեր և պարտադիր այլ վճարներ[3.2 <sup>5</sup> ]	[3.2 <sup>5</sup> ]	( )
6) վարկերի և այլ փոխառությունների տոկոսներ	[3.2 <sup>6</sup> ]	( )
7) բանկային ծառայությունների համար վճարներ	[3.2 <sup>7</sup> ]	( )
8) գովազդային ծախսեր	[3.2 <sup>8</sup> ]	( )
9) ներկայացուցչական ծախսեր	[3.2 <sup>9</sup> ]	( )
10) դատական ծախսեր	[3.2 <sup>10</sup> ]	( )
11) գործուղման ծախսեր	[3.2 <sup>11</sup> ]	( )
12) պատճառած վնասի հատուցում	[3.2 <sup>12</sup> ]	( )
13) տույժեր, տուգանքներ և գույքային այլ սանկցիաներ	[3.2 <sup>13</sup> ]	( )
14) աուդիտորական, իրավաբանական, խորհրդատվական, տեղեկատվական ծախսեր	[3.2 <sup>14</sup> ]	( )
15) նախորդ 3 տարում պակաս ցույց տրված ծախսեր	[3.2 <sup>15</sup> ]	( )
16) այլ ծախսեր	[3.2 <sup>16</sup> ]	( )
3. Նախորդ տարվանից փոխանցված ձեռնարկատիրական գործունեությունից հարկային վնաս	[3.3]	( )
4. Ձեռնարկատիրական (նոտարական) գործունեության գծով արդյունք	[3.4]	

5. Շրջանառության հարկով, հաստատագրված (արտոնագրային) վճարներով հարկվող գործունեությունից եկամտային հարկ	[3.5]
---	-------

13. 3-րդ բաժնում նշվում են ձեռնարկատիրական (նոտարական) գործունեությունից («Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքով և/կամ «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքով, և/կամ «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքի հավելված N 7-ով սահմանված գործունեությունից) ստացման ենթակա եկամուտները, ընդ որում՝ ռեզիդենտը հաշվի է առնում ՀՀ տարածքում և դրա սահմաններից դուրս ստացման ենթակա եկամուտները, ոչ ռեզիդենտը հաշվի է առնում հայաստանյան աղբյուրներից ստացման ենթակա եկամուտները

14. [3.1] և [3.2] տողերում նշվում են ընդհանուր կարգով հարկվող (եկամտային հարկ և/կամ ավելացված արժեքի հարկ) ձեռնարկատիրական (նոտարական) գործունեությունից ստացման ենթակա եկամուտները և կատարված ծախսերը (տող[3.2]=տող[3.2'] +տող[3.2<sup>2</sup>] +... +տող[3.2<sup>16</sup>], ընդ որում՝ [3.2<sup>13</sup>] տողում չեն նշվում ՀՀ պետական կամ համայնքների բյուջեներ, ինչպես նաև եկամտային հարկի և պարտադիր կուտակային վճարների գծով գանձվող տույժերը, տուգանքները և գույքային այլ սանկցիաները), [3.3] տողում նշվում է ընդհանուր կարգով հարկվող միայն ձեռնարկատիրական գործունեությունից նախորդ տարվանից փոխանցված հարկային վնասը (նոտարների համար այս տողը =0), իսկ [3.4] տողում լրացվում է ձեռնարկատիրական (նոտարական) գործունեության գծով արդյունքը (տող[3.4]= (տող[3.1]+տող[3.2])+տող[3.3]), ընդ որում՝ էթե արդյունքը բացասական է, ապա [3.4] տողում գումարը նշվում է փակագծերի մեջ և միայն ձեռնարկատիրական գործունեության մասով ստացված հարկային վնասը տեղափոխվում է հաջորդ տարի

15. [3.5] տողում նշվում են շրջանառության հարկով և հաստատագրված (արտոնագրային) վճարներով հարկվող գործունեությունից հաշվարկված եկամտային հարկի ընդհանուր գումարը (յուրաքանչյուր ամսվա հաշվով 5 հազ. դրամ)

**Բաժին III.I. Ռեզիդենտ ֆիզիկական անձի, այդ թվում՝ օտարերկրյա քաղաքացու կամ քաղաքացիություն չունեցող անձի եկամուտների վերահաշվարկ**

Հարկային գործակալի անվանումը [3.1.1]	ՀՎՀՀ											
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII
Եկամուտ հարկային գործակալից [3.1.2]												
Նվազեցվող եկամուտ [3.1.3]	( )	( )	( )	( )	( )	( )	( )	( )	( )	( )	( )	( )
Կամավոր վճար [3.1.4]	( )	( )	( )	( )	( )	( )	( )	( )	( )	( )	( )	( )
Հարկվող եկամուտ [3.1.5]												
Եկամտային հարկ [3.1.6]												
<b>Ընդամենը</b>	<b>[3.1.7]</b>											

16. [3.1.1] տողում լրացվում է հարկային գործակալի անվանումը և ՀՎՀՀ-ն

17. [3.1.2] տողում լրացվում են ՀՀ-ում հարկային գործակալների հետ ռեզիդենտ ֆիզիկական անձի, այդ թվում՝ օտարերկրյա քաղաքացու կամ քաղաքացիություն չունեցող անձի կնքած քաղաքացիաիրավական պայմանագրերից եկամուտների, աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների (այդ թվում՝ նյութական օգնության), ինչպես նաև եկամտի վճարման աղբյուրի մոտ հարկված նվազեցվող եկամուտների գումարները՝ ըստ ամիսների

18. [3.1.3] տողում նշվում են եկամտի վճարման աղբյուրի մոտ հարկված նվազեցվող եկամուտները (բացի կամավոր կենսաթոշակային վճարների)՝ ըստ ամիսների

19. [3.1.4] տողում նշվում են հարկվող եկամտից կամավոր կենսաթոշակային վճարների նվազեցվող գումարը (ոչ ավելի, քան՝ (տող[3.1.2]-տող[3.1.3])-(տող[3.1.2]-տող[3.1.3]):1.05)՝ ըստ ամիսների

20. [3.1.5] տողում նշվում են ըստ ամիսների հարկվող եկամտի գումարները (տող[3.1.2]-տող[3.1.3]-տող[3.1.4])

21. [3.1.6] տողում նշվում են ամսական հարկվող եկամտից ([3.1.5] տողում նշված) ամսական սանդղակի դրույքաչափերով հաշվարկված հարկը

22. [3.1.7] տողում նշվում է [3.1.6] տողում ըստ ամիսների հաշվարկված հարկի հանրագումարը

#### Բաժին IV. Տարեկան եկամտային հարկի հաշվարկ

1. Ընդհանուր կարգով հարկվող գործունեության գծով դրական արդյունք	[4.1]	
2. Կամավոր կենսաթոշակային վճարներ	[4.2]	( )
3. Հարկվող եկամուտ	[4.3]	
4. Հարկվող եկամտից եկամտային հարկ	[4.4]	
5. <i>Տարվա համար հաշվարկված եկամտային հարկ</i>	[4.5]	
6. Հարկային գործակալների կողմից պահված հարկի գումար	[4.6]	( )
7. Այլ պետություններում պահված հարկի գումար	[4.7]	
8. Այլ պետություններում պահված հարկի գումարի հաշվանցվող մաս	[4.8]	( )
9. Հարկային արտոնությունների գումար	[4.9]	( )
10. Ընդամենը նվազեցման ենթակա տարեկան եկամտային հարկի գումար	[4.10]	( )
11. Ենթակա է վճարման կամ վերադարձման (հաշվանցման)	[4.11]	
12. Հաջորդ տարվա կանխավճարների եռամսյակային գումար	[4.12]	

23. 4-րդ բաժնում տրվում է եկամտային հարկի հաշվարկը

24. [4.1] տողում լրացվում է քաղաքացիաիրավական և աշխատանքային պայմանագրերի գծով արդյունքի (տող[1.6]), ինչպես նաև ընդհանուր կարգով հարկվող ձեռնարկատիրական (նոտարական) գործունեության գծով դրական արդյունքի (տող[3.4])>0) հանրագումարը (տող[4.1]=տող[1.6]+տող[3.4])

25. [4.2] տողում լրացվում են ընդհանուր կարգով հարկվող գործունեության հարկվող եկամտից նվազեցվող կամավոր կենսաթոշակային վճարների նվազեցվող գումարը (ոչ ավելի, քան՝ տող[4.1]-տող[4.1]:1.05) և [4.3] տողում լրացվում է հարկվող եկամտի գումարը ([4.3]=[4.1]+[4.2])

26. [4.4] տողում ինքնաշխատ լրացվում է [4.3] տողում նշված հարկվող եկամտի գումարից օրենսդրությամբ սահմանված տարեկան սանդղակի դրույքաչափերով հաշվարկված եկամտային հարկի գումարը

27. [4.5] տողում լրացվում է տարվա համար հաշվարկված եկամտային հարկի հանրագումարը (տող[4.5]=տող[2.8]+տող[3.5] +տող[3.1.7]+տող[4.4])

28. [4.6] տողում նշվում է (հարկային գործակալների կողմից տրված տեղեկանքների հիման վրա) եկամտի վճարման աղբյուրի մոտ պահված (գանձված) եկամտային հարկի գումարը, [4.7] և [4.8] տողերում նշվում են այլ պետություններում դրանց օրենսդրությանը համապատասխան պահված (գանձված) հարկը (օտարերկրյա պետության հարկային մարմնի կողմից վավերացված տեղեկանքի հիման վրա) և հարկի այն գումարը, որի չափով ՀՀ օրենսդրությանը համապատասխան ենթակա է նվազեցման տարեկան եկամտային հարկը, [4.9] տողում նշվում է օրենքով սահմանված հարկային արտոնությունների ընդհանուր

գումարը, իսկ [4.10] տողում լրացվում է տարեկան եկամտային հարկից նվազեցման ենթակա գումարը (տող[4.10]=տող[4.6]+տող[4.8]+տող[4.9])

29. [4.11] տողում լրացվում է ՀՀ պետական բյուջե վճարման կամ ՀՀ պետական բյուջեից վերադարձման (հաշվանցման) ենթակա եկամտային հարկի գումարը (տող[4.11]=տող[4.5]+տող[4.10], ընդ որում՝ եթե արդյունքը բացասական է, ապա [4.11] տողում գումարը նշվում է փակագծերի մեջ

30. [4.12] տողում միայն անհատ ձեռնարկատերերի կողմից նշվում է հաջորդ տարվա եկամտային հարկի կանխավճարների եռամսյակային գումարը ((եկամտային հարկ] $\times$ 18.75%), ընդ որում կանխավճարների հաշվարկման նպատակով եկամտային հարկը հաշվարկվում է [3.4] տողում նշված ձեռնարկատիրական գործունեության գծով դրական արդյունքից տարեկան սանդղակի դրույքաչափերով հաշվարկված գումարի չափով

### Բաժին V. Սոցիալական վճարի հաշվարկ

1. Ինքնազբաղվածությունից եկամուտ	[5.1]	
2. Ինքնազբաղվածությունից ստացված եկամտից սոցիալական վճարի դրույքաչափ	[5.2]	<b>5%</b>
3. Ինքնազբաղվածությունից ստացված եկամտի գծով սոցիալական վճար	[5.3]	
4. Ձեռնարկատիրական (նոտարական) գործունեությունից դրական արդյունք	[5.4]	
5. Կամավոր կենսաթոշակային վճարներ	[5.5]	( )
6. Ձեռնարկատիրական (նոտարակ.) գործունեությունից սոցիալական վճար	[5.6]	
7. Սոցիալական վճար շրջանառության հարկով, հաստատագրված (արտոնագրային) վճարներով հարկվող գործունեությունից	[5.7]	
8. <i>Սոցիալական վճար, ընդամենը՝</i>	[5.8]	

31. 5-րդ բաժնում տրվում է սոցիալական վճարի հաշվարկը

32. [5.1] տողում լրացվում է ինքնազբաղվածությունից ստացված եկամտի գումարը, [5.2] տողում լրացվում է ինքնազբաղվածությունից ստացված եկամտի գծով սոցիալական վճարի դրույքաչափը (5%) և [5.3] տողում լրացվում է դրանց գծով հաշվարկված սոցիալական վճարի գումարը (տող[5.3]=(տող[5.1] $\times$ տող[5.2])

33. [5.4] տողում լրացվում է ընդհանուր կարգով հարկվող ձեռնարկատիրական (նոտարական) գործունեության գծով դրական արդյունքը, այնուհետև՝ [5.5] տողում նշվում է կամավոր կենսաթոշակային վճարների նվազեցվող գումարը (ոչ ավելի, քան՝ տող[5.4]-տող[5.4]:1.05) և [5.6] տողում լրացվում է ձեռնարկատիրական (նոտարական) գործունեության գծով օրենսդրությամբ սահմանված չափերով հաշվարկված սոցիալական վճարի գումարը

34. [5.7] տողում լրացվում է շրջանառության հարկով և հաստատագրված (արտոնագրային) վճարներով հարկվող գործունեությունից հաշվարկված սոցիալական վճարների գումարը (յուրաքանչյուր ամսվա հաշվով 5 հազ. դրամ)

35. [5.8] տողում լրացվում է սոցիալական վճարի ընդհանուր գումարը (տող[5.8]=տող[5.3]+տող[5.6]+տող[5.7])

### Բաժին VI. Եկամուտները՝ ըստ գործունեության տեսակների

Բաժին	Գործունեության տեսակը (կողը)				Տեսակարար կշիռը (%)
	հատված	խումբ	դաս	ենթադաս	


VI բաժնում նշվում են հաշվետու տարում հարկ վճարող ֆիզիկական անձի (անհատ ձեռնարկատեր, նոտար, ինքնազբաղված անձ) ըստ գործունեության տեսակների ստացված եկամուտների տեսակարար կշիռները (տոկոսով) համախառն եկամտի մեջ (ըստ տեսակարար կշիռների նվազման), ընդ որում՝ «Գործունեության տեսակը (կոդը)» սյունակում գործունեության տեսակները (կոդերը) նշվում են ՀՀ էկոնոմիկայի նախարարի 19.09.2013թ. «Հայաստանի Հանրապետության տեխնիկատնտեսական և սոցիալական տեղեկատվության «Տնտեսական գործունեության տեսակների դասակարգիչ» հաստատելու և ՀՀ էկոնոմիկայի նախարարի 03.06.2009թ. N 372-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 874-Ն հրամանի հավելվածով հաստատված Տնտեսական գործունեության դասակարգչին համապատասխան (օրինակ՝ C25910 կոդը /բաժին C, հատված 25, խումբ 25.9, դաս 25.91, ենթադաս 25.91.0/ համապատասխանում է «Մետաղական տակառների և համանման այլ տարողությունների արտադրություն» գործունեության տեսակին), իսկ «Տեսակարար կշիռը (%)» սյունակում համամասնությունները նշվում են տոկոսով համախառն եկամտի նկատմամբ: Այս սյունակում նշված տեղեկատվությունները օգտագործվում են վիճակագրության նպատակով և չեն կարող հիմք հանդիսանալ եկամտային հարկի հաշվարկման (վերահաշվարկման) համար:

**Հարկ վճարողի ստորագրություն**  
(*հավելվածը խմբ. 05.06.15 N 358-Ն*)

Հավելված 4  
Հաստատված է  
ՀՀ ֆինանսների նախարարի  
2014 թվականի հուլիսի 7-ի  
N 417-Ն հրամանի

<b>ՊԱՐԶԵՑՎԱԾ ՀԱՇՎԱՐԿ</b> <b>Տարեկան եկամուտների մասին</b> _____ (տարի)		<b>Փաստաթղթի մուտքագրման համար</b> _____ (լրացվում է հարկային մարմնի կողմից)	
<b>Ֆիզիկական անձի նույնականացման տվյալները</b>			
Ազգանուն	Անուն		
Հանրային ծառայությունների համարանիշ (ՀԾՀ)			
Կուտակային կենսաթոշակային համակարգի մասնակցության կարգավիճակ	Հարկ վճարողի հաշվառման համար _____ (ՀՎՀՀ)		
Հաշվարկի ներկայացման ամսաթիվ՝	Չափի միավոր՝ Դրամ		

1. «Փաստաթղթի համարը» մասում նշվում է հարկային մարմնում ֆիզիկական անձի (անհատ ձեռնարկատեր, նոտար, ինքնազբաղված անձ) անձնական գործում տվյալ փաստաթղթի հերթական համարը, իսկ հետագա տողերում նշվում են ֆիզիկական անձի նույնականացման տվյալները

2. «Հանրային ծառայությունների համարանիշը (ՀՕՀ)» տողում նշվում է ֆիզիկական անձի հանրային ծառայությունների համարանիշը կամ հանրային ծառայությունների համարանիշ չունենալու մասին տեղեկանքի համարը (սոցիալական ապահովության քարտի համարը կամ սոցիալական ապահովության քարտ չունենալու մասին տեղեկանքի համարը), որի հիման վրա «Ազգանունը» և «Անունը» տողերում ինքնաշխատ լրացվում է աշխատողի ազգանունը և անունը

3. «Կուտակային կենսաթոշակային համակարգի մասնակիցը» տողում նշվում է կուտակային կենսաթոշակային համակարգում ֆիզիկական անձի մասնակցության կողմը (1՝ սոցիալական վճար կատարող չէ, 2՝ սոցիալական վճար կատարող է, 3՝ դիմումի հիման վրա սոցիալական վճար կատարող է)

4. «Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)» տողում նշվում է հարկ վճարողի հաշվառման համարը (առկայության դեպքում)

**Բաժին I. Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) քաղաքացիաիրավական պայմանագրերից, աշխատանքային պայմանագրերից եկամուտներ և ծախսեր**

1. Քաղաքացիաիրավական պայմանագրերով վարձատրություն	[1.1]	
2. Քաղաքացիաիրավական պայմանագրերի գծով ծախսեր	[1.2]	( )
3. Քաղաքացիաիրավական պայմանագրերի գծով արդյունք	[1.3]	
4. Աշխատավարձ	[1.4]	
5. Այլ հարկվող եկամուտ	[1.5]	
6. Քաղաքացիաիրավական և աշխատանքային պայմանագրերի գծով արդյունք	[1.6]	

5. 1-ին բաժնում նշվում են ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) քաղաքացիաիրավական պայմանագրերից ստացած եկամուտները և ծախսերը, աշխատանքային պայմանագրերից ստացման ենթակա աշխատավարձը և այդ պայմանագրերի շրջանակներում ստացած այլ եկամուտները (արդյունքը), ընդ որում՝ ռեզիդենտը հաշվի է առնում ՀՀ տարածքում և դրա սահմաններից դուրս ստացման ենթակա (ստացած) եկամուտները, ոչ ռեզիդենտը հաշվի է առնում հայաստանյան աղբյուրներից ստացման ենթակա (ստացած) եկամուտները, իսկ նվազեցվող եկամուտները հաշվի չեն առնվում

6. [1.1] և [1.2] տողերում նշվում են ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) քաղաքացիաիրավական պայմանագրերից ստացած եկամուտները (վարձատրությունը) և դրանց գծով կատարված ծախսերը, իսկ [1.3] տողում լրացվում է ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) քաղաքացիաիրավական պայմանագրերի գծով արդյունքը (տող[1.3]=տող[1.1]+ տող[1.2]), ընդ որում՝ էթե արդյունքը բացասական է, ապա գումարը նշվում է փակագծերի մեջ և սույն հաշվարկի հետագա հաշվարկներում հաշվի չի առնվում

7. [1.4] տողում նշվում են ՀՀ ռեզիդենտների կողմից ՀՀ տարածքից դուրս աշխատանքային պայմանագրերից ստացման ենթակա աշխատավարձը և դրան հավասարեցված եկամուտը

8. [1.5] տողում նշվում են ՀՀ ռեզիդենտների կողմից ՀՀ տարածքից դուրս գործատուներից ստացված այլ եկամուտները (այդ թվում՝ նյութական օգնության գումարները), որոնք հարկվում են տարեկան սանդղակով

9. [1.6] տողում ինքնաշխատ լրացվում է ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) քաղաքացիաիրավական պայմանագրերի, աշխատավարձի գծով դրական արդյունքը (տող[1.6]=(տող[1.3]+տող[1.4])+տող[1.5])

**Բաժին II. Քաղաքացիաիրավական այլ պայմանագրերից եկամուտներ և եկամտային հարկ (բաժինը խմբ. 05.06.15 N 358-Ն)**

Եկամուտների տեսակ	Եկամուտ [2.1]	Դրույքաչափ [2.2]	Հարկ [2.3]
1. Ռոյալթի [2.4]		10%	
2. Տոկոս [2.5]		10%	
3. Վարձավճար [2.6]		10%	
3.1. Անշարժ գույքի վարձավճարի 58,35 մլն դրամը գերազանցող գումար [2.6.1]		10%	
4. Գույքի օտարման դիմաց եկամուտ [2.7]		10%	
<b>Ընդամենը [2.8]</b>			

10. 2-րդ բաժնում նշվում են հարկային գործակալ չհանդիսացողներից (բացառությամբ [3.1]-րդ տողի) քաղաքացիաիրավական այլ պայմանագրերից ստացած եկամուտները (ռոյալթի, տոկոս, վարձավճար, գույքի օտարման դիմաց եկամուտ), որոնք հարկվում են առանձին դրույքաչափերով, ընդ որում՝ ռեզիդենտը հաշվի է առնում ՀՀ տարածքում և դրա սահմաններից դուրս ստացված եկամուտները, ոչ ռեզիդենտը հաշվի է առնում հայաստանյան աղբյուրներից ստացված եկամուտները

11. [2.1] սյունակում նշվում են հարկային գործակալ չհանդիսացողներից անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց ստացած՝ ռոյալթիները (տող [2.4]), տոկոսները (տող [2.5]), վարձակալության դիմաց հատուցումը (հարկային գործակալ չհանդիսացող անձանցից ստացված վարձավճարները՝ տող [2.6], հարկային տարվա ընթացքում բոլոր աղբյուրներից, այդ թվում հարկային գործակալներից, անշարժ գույքի վարձակալությունից ստացված վարձակալական վճարների հանրագումարի 58,35 մլն դրամը գերազանցող գումարները՝ տող [2.6.1]), ինչպես նաև անհատ ձեռնարկատեր չհանդիսացող կառուցապատողի կողմից անշարժ գույքի՝ օրենքով սահմանված չափը գերազանցող տարածքների օտարումից եկամուտը (տող [2.7]), այնուհետև՝ [2.2] սյունակում նշված են եկամուտների այդ տեսակների համար եկամտային հարկի դրույքաչափերը և [2.3] սյունակում լրացվում են [2.4], [2.5], [2.6], [2.6.1] և [2.7] տողերում նշված եկամտից հաշվարկված եկամտային հարկի գումարները (սյունակ[2.3]=սյունակ[2.1]xսյունակ[2.2])

12. [2.8] տողում (սյունակ[2.3]) լրացվում է [2.4], [2.5], [2.6], [2.6.1] և [2.7] տողերում նշված եկամուտներից հաշվարկված եկամտային հարկի ընդհանուր գումարը (տող[2.8]=սյունակ[2.3]-ի տողերի հանրագումարը)

*(բաժինը խմբ. 05.06.15 N 358-Ն)*

**Բաժին III. Ձեռնարկատիրական գործունեությունից եկամուտներ և ծախսեր**

1. Շրջանառության հարկով, հաստատագրված (արտոնագրային) վճարներով հարկվող գործունեությունից եկամտային հարկ [3.1]

13. [3.1] տողում նշվում է շրջանառության հարկով (այդ թվում՝ նոտարական գործունեությունից), հաստատագրված (արտոնագրային) վճարներով հարկվող գործունեությունից հաշվարկված եկամտային հարկի գումարը (յուրաքանչյուր ամսվա հաշվով 5 հազ. դրամ)

**Բաժին III.I. Ռեզիդենտ ֆիզիկական անձի, այդ թվում՝ օտարերկրյա քաղաքացու կամ քաղաքացիություն չունեցող անձի եկամուտների վերահաշվարկ**

Հարկային գործակալի անվանումը [3.1.1]	ՀՎՀՀ											
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII
Ամիս												
Եկամուտ հարկային գործակալից [3.1.2]												
Նվազեցվող եկամուտ [3.1.3]	( )	( )	( )	( )	( )	( )	( )	( )	( )	( )	( )	( )
Կամավոր վճար [3.1.4]	( )	( )	( )	( )	( )	( )	( )	( )	( )	( )	( )	( )
Հարկվող եկամուտ [3.1.5]												
Եկամտային հարկ [3.1.6]												
<b>Ընդամենը</b>	<b>[3.1.7]</b>											

14. [3.1.1] տողում լրացվում է հարկային գործակալի անվանումը և ՀՎՀՀ-ն

15. [3.1.2] տողում լրացվում են ՀՀ-ում հարկային գործակալների հետ ռեզիդենտ ֆիզիկական անձի, այդ թվում՝ օտարերկրյա քաղաքացու կամ քաղաքացիություն չունեցող անձի կնքած քաղաքացիաիրավական պայմանագրերից եկամուտների, աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների (այդ թվում՝ նյութական օգնության), ինչպես նաև եկամտի վճարման աղբյուրի մոտ հարկված նվազեցվող եկամուտների գումարները՝ ըստ ամիսների

16. [3.1.3] տողում նշվում են եկամտի վճարման աղբյուրի մոտ հարկված նվազեցվող եկամուտները (բացի կամավոր կենսաթոշակային վճարների)՝ ըստ ամիսների

17. [3.1.4] տողում նշվում են հարկվող եկամտից կամավոր կենսաթոշակային վճարների նվազեցվող գումարը (ոչ ավելի, քան՝ (տող[3.1.2]-տող[3.1.3])-(տող[3.1.2]-տող[3.1.3]):1.05)՝ ըստ ամիսների

18. [3.1.5] տողում նշվում են ըստ ամիսների հարկվող եկամտի գումարները (տող[3.1.2]-տող[3.1.3]-տող[3.1.4])

19. [3.1.6] տողում նշվում են ամսական հարկվող եկամտից ([3.1.5] տողում նշված) ամսական սանդղակի դրույքաչափերով հաշվարկված հարկը

20. [3.1.7] տողում նշվում է [3.1.6] տողում ըստ ամիսների հաշվարկված հարկի հանրագումարը

**Բաժին IV. Տարեկան եկամտային հարկի հաշվարկ**

1. Ընդհանուր կարգով հարկվող գործունեության գծով դրական արդյունք	[4.1]	
2. Կամավոր կենսաթոշակային վճար	[4.2]	( )
3. Հարկվող եկամուտ	[4.3]	
4. Հարկվող եկամտից եկամտային հարկ	[4.4]	
5. <i>Տարվա համար հաշվարկված եկամտային հարկ</i>	[4.5]	

6. Հարկային գործակալների կողմից պահված հարկի գումար	[4.6]	( )
7. Այլ պետություններում պահված հարկի գումար	[4.7]	
8. Այլ պետություններում պահված հարկի գումարի հաշվանցվող մաս	[4.8]	( )
9. Հարկային արտոնությունների գումար	[4.9]	( )
10. Ընդամենը նվազեցման ենթակա տարեկան եկամտային հարկի գումար	[4.10]	( )
11. Ենթակա է վճարման կամ վերադարձման (հաշվանցման)	[4.11]	

21.4-րդ բաժնում տրվում է եկամտային հարկի հաշվարկը

22. [4.1] տողում ինքնաշխատ լրացվում է քաղաքացիաիրավական և աշխատանքային պայմանագրերի գծով արդյունքը (տող[1.6])

23. [4.2] տողում նշվում են քաղաքացիաիրավական և աշխատանքային պայմանագրերի գծով նվազեցվող կամավոր կենսաթոշակային վճարումների նվազեցվող գումարը (ոչ ավելի, քան՝ տող[4.1]-տող[4.1]:1.05) և [4.4] տողում ինքնաշխատ լրացվում է [4.3] տողում նշված հարկվող եկամտի գումարից օրենսդրությամբ սահմանված տարեկան սանդղակի դրույքաչափերով հաշվարկված եկամտային հարկի գումարը

24. [4.5] տողում լրացվում է տարվա համար հաշվարկված եկամտային հարկի հանրագումարը (տող[4.5]=տող[2.8]+տող[3.1]+տող[3.1.7])+տող[4.4])

25. [4.6] տողում նշվում է (հարկային գործակալների կողմից տրված տեղեկանքների հիման վրա) եկամտի վճարման աղբյուրի մոտ պահված (գանձված) եկամտային հարկի գումարը, [4.7] և [4.8] տողերում նշվում են այլ պետություններում՝ դրանց օրենսդրությանը համապատասխան պահված (գանձված) հարկը (օտարերկրյա պետության հարկային մարմնի կողմից վավերացված տեղեկանքի հիման վրա) և հարկի այն գումարը, որի չափով ՀՀ օրենսդրությանը համապատասխան ենթակա է նվազեցման տարեկան եկամտային հարկը, [4.9] տողում նշվում է օրենքով սահմանված հարկային արտոնությունների ընդհանուր գումարը, իսկ [4.10] տողում լրացվում է տարեկան եկամտային հարկից նվազեցման ենթակա գումարը (տող[4.10]=տող[4.6]+տող[4.8]+տող[4.9])

26. [4.11] տողում լրացվում է ՀՀ պետական բյուջե վճարման կամ ՀՀ պետական բյուջեից վերադարձման (հաշվանցման) ենթակա եկամտային հարկի գումարը (տող[4.11]=տող[4.5]+տող[4.10], ընդ որում՝ եթե արդյունքը բացասական է, ապա [4.11] տողում գումարը նշվում է փակագծերի մեջ

### Բաժին V. Սոցիալական վճարի հաշվարկ

1. Ինքնազբաղվածությունից եկամուտ	[5.1]	
2. Ինքնազբաղվածությունից ստացված եկամտից սոցիալական վճարի դրույքաչափ	[5.2]	5%
3. Ինքնազբաղվածությունից ստացված եկամտի գծով սոցիալական վճար	[5.3]	
4. Սոցիալական վճար շրջանառության հարկով, հաստատագրված (արտոնագրային) վճարներով հարկվող գործունեությունից	[5.4]	
5. <i>Սոցիալական վճար, ընդամենը՝</i>	[5.5]	

27. 5-րդ բաժնում տրվում է սոցիալական վճարների հաշվարկը

28. [5.1] տողում լրացվում է ինքնազբաղվածությունից ստացված եկամտի գումարը, [5.2] տողում լրացվում է ինքնազբաղվածությունից ստացված եկամտի գծով սոցիալական վճարի դրույքաչափը (5%) և [5.3] տողում լրացվում է դրանց գծով հաշվարկված սոցիալական վճարի գումարը (տող[5.3]=(տող[5.1]xտող[5.2])

29. [5.4] տողում լրացվում է շրջանառության հարկով և հաստատագրված (արտոնագրային) վճարներով հարկվող գործունեությունից հաշվարկված սոցիալական վճարների գումարը (յուրաքանչյուր ամսվա հաշվով 5 հազ. դրամ)

30. [5.5] տողում լրացվում է սոցիալական վճարների ընդհանուր գումարը (տող[5.5]=տող[5.3]+տող[5.4])

**Բաժին VI. Եկամուտները՝ ըստ գործունեության տեսակների**

Բաժին	Գործունեության տեսակը (կոդը)				Տեսակարար կշիռը (%)
	հատված	խումբ	դաս	ենթադաս	

VI բաժնում նշվում են հաշվետու տարում հարկ վճարող ֆիզիկական անձի (անհատ ձեռնարկատեր, նոտար, ինքնազբաղված անձ) ըստ գործունեության տեսակների ստացված եկամուտների տեսակարար կշիռները (տոկոսով) համախառն եկամտի մեջ (ըստ տեսակարար կշիռների նվազման), ընդ որում՝ «Գործունեության տեսակը (կոդը)» սյունակում գործունեության տեսակները (կոդերը) նշվում են ՀՀ էկոնոմիկայի նախարարի 19.09.2013թ. «Հայաստանի Հանրապետության տեխնիկատնտեսական և սոցիալական տեղեկատվության «Տնտեսական գործունեության տեսակների դասակարգիչ» հաստատելու և ՀՀ էկոնոմիկայի նախարարի 03.06.2009թ. N 372-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 874-Ն հրամանի հավելվածով հաստատված Տնտեսական գործունեության դասակարգչին համապատասխան (օրինակ՝ C25910 կոդը /բաժին C, հատված 25, խումբ 25.9, դաս 25.91, ենթադաս 25.91.0/ համապատասխանում է «Մետաղական տակաոների և համանման այլ տարողությունների արտադրություն» գործունեության տեսակին), իսկ «Տեսակարար կշիռը (%)» սյունակում համամասնությունները նշվում են տոկոսով համախառն եկամտի նկատմամբ: Այս սյունակում նշված տեղեկատվությունները օգտագործվում են վիճակագրության նպատակով և չեն կարող հիմք հանդիսանալ եկամտային հարկի հաշվարկման (վերահաշվարկման) համար:

**Հարկ վճարողի ստորագրություն**  
*(հավելվածը խմբ. 05.06.15 N 358-Ն)*